

1(25) 2012

ՏՏ 07

Հրագրություն

ՂԱՐԱԲԱՀՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԼՄ-ՈՒՄ
ՊԱՏԵՐԱՋՄԱԿԱՆ ՈՒ ՀԵՏՊԱՏԵՐԱՋՄԱԿԱՆ ԾՐՁԱՆ

Ա.Ա. Ավանեսյան

Ղարաբաղյան հիմնականդիրը ծագել է արցախահայության՝ իր պատմական հայրենիքում ազատ ապրելու իրավունքն անարդարացիորեն ուժնահարելու հետեւանքով:

Այն, որպես էլենորադարձական կոնֆլիկտ, միջազգային օրակարգում հայտնվել է 1918-1920թթ., երբ Ռուսական կայսրության փլուզումից հետո, Ազգերի լիգան Լեռնային Ղարաբաղը վիճելի տարածք ճանաչեց՝ 1918թ. իրենց անկախությունը հռչակած Հայաստանի Հանրապետության եւ Աղրբեջանական Դնիմոկրատական Հանրապետության միջև։ Այդուհետ, տարբեր փաստաթղթերով ու նաև փաստարկներով, պատմական Արցախն անընդհատ ընկնում էր մեկ Աղրբեջանի կազմի մեջ, մեկ ճանաչվում՝ որպես Հայաստանի անկապտելի մաս (2. էջ 9-10):

Հակամարտության նոր փուլի ակիզբ դարձավ 1988թ.-ի փետրվարի 20-ի ԼՂ ինքնավար մարզի ժողովրդական պատզամավորների արտահետք նատաշրջանի որոշումը, ըստ որի, պահանջվում էր՝ մարզը ԱղրբեջԱՀ կազմից ՀՀԱՀ կազմի մեջ մտցնելու հարցը քննարկել եւ դրականորեն լուծում տալ (2. էջ 11): Խաղաղ գույցներին հաջորդեց հայությանը պարտադրված Արցախյան ազատամարտը, որն ավարտվեց զինադադարի կարմար (1991-1994թթ.): Թե՛ն, սակա չեր լինի այն որպես հայերի բացարձակ հաղթանակ։

Առայսօր, Ղարաբաղյան հիմնականդիրն ու նրա կարգավորման գործընթացը, շարունակում են մնալ Հարավային կովկասի առանցքային զարգացումներից մեկը։ Թե՛ն, 20-ամյա հարաբերական խաղաղության պայմաններում այդպես էլ կարգավորմանը միտված զարգացումները չհանգեցրին երկու կողմերին էլ ընդունելի արդյունքի, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ վերջին տարիներին, բռվանդակային առումով, էապես ընդլայնվել են Ղարաբաղյան հիմնականդիր՝ տարածաշրջանային այլ գործընթացների հետ փոխկապակցվածության շրջանակները։ Իսկ, չնայած, բազմաթիվ լրատվամիջոցների ու վերլուծաբանների կողմից այն տեսակնետն է հնչում, ըստ, որի՝ Ղարաբաղյան կարգավորման գործընթացը մտնում է փակուղի, այդուհանդերձ, չի կարելի ժխտել, որ ներկայումս Ղարաբաղյան հիմնականդիր կարգավորման հարցով է մասամբ պայմանավորված տարածաշրջանային՝ քաղաքական, ռազմաքաղաքական ակնկալվող վերադասավորումների իրականացման արագացումը (3):

Քննության առնելով Արցախում գործող ԶԼՄ-ների դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, անհրաժեշտ է նաև, անդրադարձ կատարել մինչպատճերազմյան ու պատճերազմական ժամանակաշրջանը։ Մինչեւ 1988 թվականի փետրվարը՝ այսինքն մինչեւ Արցախյան շարժման սկիզբը, ԼՂԻՄ-ի հնարավորությունները՝ ԶԼՄ-ով հանդես գալու, սահմանափակվում էին այն ժամանակ լույս տեսնող «Խորհրդային Ղարաբաղ» թերթով, նաև երկժամանց ռադիոհաղորդումների ծառայությամբ։ Սակայն նման լրատվամիջոցներով հնարավոր չեր մարզի կարծիքը հայտնի դարձնել ԽՍՀ Միությանն ու աշխարհի այլ տարածաշրջաններին։

Եվ այսպես, Ղարաբաղյան շարժման հենց սկզբից ամբողջ սրությամբ ծառացնել էր ԼՂԻՄ-ի լրատվական շրջափակումը ճեղքելու խնդիրը։ Այդ գործում, առաջնակարգ դերը, բնականաբար Հայաստանին էր պատկանում։ Նաև, այդ խնդիրը սկսեց լուծվել ՏԱԱՍՀ-ի կառուցվածքային ստորաբաժանման՝ «Արմենպրես» լրատվական գործակալության միջոցով։ Այդպիսով, ԼՂ-ի իրադարձությունների մասին տեղեկացան ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլև նրա սահմաններից դուրս։ Դրանով իսկ, ԼՂԻՄ-ի մասին հասարակական կարծիքի ծեսավորման կառուցվածքը շարժման հենց սկզբից բաժանվեց 5 քաղաքիների՝ ԼՂԻՄ-ի, Աղրբեջանի, Հայաստանի, ԽՍՀՄ-ի եւ «դրսի աշխարհի» միջև։ (1. էջ 4):

Քանի որ ԼՂ-ի հակամարտությունն աշխարհի ողջ ԶԼՄ-ի ներկայացուցիչների համար նելլորհրդային դաշտում այդ տեսակնետից առաջին փորձությունն էր՝ այս հարցի շուրջ,

լրագրողական տարածայնությունները չունեն իրենց նախօրինակը: Քննության առնելով Ղարաբաղյան հիմնախնդրի ու նրա շուրջ տարվող բանակցությունների ընթացքը, անհրաժեշտ է որպես առանձին տարր, քննել նաև լրագրողի անձը, նրա քաղաքացիական դիրքորոշումը, մասնագիտական վարպետությունը, կենսափորձի հիման վրա ձեռափրկած աշխարհայացքը, հակամարտության մեջ ներքաշված պետական կազմափրումների եւ նրանց ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը:

Հատկապես, ուշագրավ է ԽՍՀՄ ԳԼՄ-ի նյութերի բովանդակությունը: Այն լրագրողները, ովքեր փորձել են դեպքերը լուսաբանել՝ որպես ինֆորմացիայի աղբյուր ընտրելով Աղրբեջանը՝ դարձել էին «աղրբեջանամետ», ինչը թերեւս, հիմնավորված է Աղրբեջանի կողմից ներկայացվող իրավական եւ քաղաքական փաստարկների փաթեթի բովանդակությամբ, ըստ որի՝ հակամարտության կարգավորման համար պետք է կիրավիլ տարածքային ամբողջականության սկզբունքը, որի տեսակետից այսօր Աղրբեջանի տարածքների 20 տոկոսը Հայաստանի Հանրապետության կողմից օկուպացված է (2 էջ 7):

Այն լրագրողներն, ովքեր հիմնախնդրին ծանոթանում եին Երեւանում եւ Ստեփանակերտում, որպես կանոն, «հայամետ» դիրքորոշում էին բռնում՝ պարզապես ծանոթանալով հայոց պատմությանն ու պատմական Արցախի անցյալին:

Ինչ վերաբերում է Արցախում գործող լրատվության աղբյուրներին, հարկ է նշել, որ Ղարաբաղյան շարժման հենց սկզբից ու պատճերազմի հետագա տարիներին, արցախահայությունն, ԳԼՄ-ի միջոցով, աշխարհին է ներկայացնում հետեւյալ իրողությունը. «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրը ժողովրդի ինքնորոշումն է: Այն, ինչ կատարվել է քսանականների սկզբին՝ հայ ժողովրդին արինստականորեն նրկու մասի բաժանելը եւ Արցախը նրա ժողովրդի կամքին հակառակ, Աղրբեջանի կազմի մեջ մտցնելը, ինչին հետեւնց ազգային խորականությունը եւ արցախահայության ծանր վիճակը, անհապաղ պետք է ուղղվի: ԼՂԻՄ-ի եւ Հայաստանի վերամիավորումը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության հետագա գոյատեման միակ նրաշխիքն է» (1. էջ 16):

Սակայն միանգամայն այլ էր՝ այդ տարիներին Աղրբեջանի լրատվամիջոցներով հնչածը. «Ժողովրդի ինքնորոշման առումն ԼՂ-ի հիմնախնդրի, որպես այդպիսին, գոյություն չունի: Հայ ժողովրդին արդեն մեկ անգամ ինքնորոշվել ու ստեղծել է իր պետությունը՝ Հայաստանը: Այն, ինչ աշխարհին է ներկայացվում իբրեւ ԼՂԻՄ-ի հայ ժողովրդի ինքնորոշման հիմնախնդրի՝ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ Աղրբեջանից պատմական հողերը լավուու Հայաստանի ձգտում: Ուստի, Հայաստանին պետք է զավթիչ համարել, որն իր գործողություններով պառակտում է սերմանում ԽՍՀՄ ժողովրդների անխախտ բարեկամության մեջ» (1. էջ 16):

Հաշտությունից հետո Լեռնային Ղարաբաղի հենկավարությունը գիտակցաբար դիմեց հասարակական կարծիքի վրա ԼՂ-ի լրատվական ազդեցության «պարտադիր» մակարդակի նվազեցմանը: Դա բացատրվում էր նրանով, որ Լեռնային Ղարաբաղը ժողովրդավարական պետություն կառուցելու ուղիղիքը է վերցրել, ինչն իր հերթին ենթադրում է ազատ ու անկախ մամուլ, ինչպես նաև օտարերկրյա ԳԼՄ-ի ազատ ելումուտը ԼՂ:

Այսպիսով, սկսած 1994 թվականից, ԼՂ-ն որպես անկախ պետություն, հետեւում է նաև ԳԼՄ-ի գործունեության չափանիշներին:

Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող նյութերով մեր լրատվության աղբյուրները տարբերվում են մեկը մյուսից՝ թե քննարկումների ակտիվության աստիճանով եւ թե մեկնաբանությունների առումով: Կան ԳԼՄ-ներ, որոնք սահմանափակում են իրենց առարկությունը՝ միայն հաղորդագրություն տալով քննարկվող կամ ձեռնարկվող այս կամ այն հարցի շուրջ՝ ձեռնպահ մնալով մեկնաբանություններից: Որոշ ԳԼՄ-ներ էլ հակառակը, բացի տեղեկատվություն հաղորդելուց՝ ակտիվություն քննարկում են քանակցային գործնթացը, որոշակի նզրահանգումների գալիս, հարկ եղածի դեպքում քննադատում են միջազգային կառուցների ձեռնարկումները, եւ հակամարտող կողմների գրաված դիրքերը:

Այդու, Արցախի լրատվական ընտանիքը մեծ ուշագրությամբ հետեւում է տարբեր աշխարհաբաղական զարգացումներին ու գործնթացներին, առավելապես, եթե դրանք վերաբերում են Ղարաբաղյան հիմնախնդրին կամ էլ նման քաղաքական իրավիճակում գտնվող այլ երկրներում տնիդ ունեցող իրադարձություններին:

Իհարկե, այդ ամենը կատարվում է՝ ելնելով տվյալ լրատվամիջոցի քաղաքական ու հասարակական դիրքորոշումից ու որդեգրած սկզբունքներից:

Այսպես օրինակ, հանրային լրատվամիջոցները Ղարաբաղյան հիմնախնդրին ու նրա շուրջ իրականացվող գործնթացներին անդրադառնալով՝ հաճախակի վերլուծում են միջնորդների

կամ հայաստանի ու Ադրբեյջանի կողմից ի կատար ածվող քաղաքականությունը՝ նրբեք սակայն շդատապարտելով կամ չվերլուծելով տեղական իշխանության բռնած դիրքորոշումը կամ արփած հայտարարությունները:

ԼՂՀ իշխանությունների որդեգրած դեմոկրատական սկզբունքները թույլ են տալիս՝ նաև Արցախում անկախ լրատվամիջոցների գոյությանը, որոնց շնորհիվ հասարակությունը կարողանում է մատուցվածի ու վերլուծվածի մակարդակով տեղեկանալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործնաթագի ներքին խոհանոցին, փորձում է հասկանալ երկրի ճակատագիրը որոշող տերությունների քաղաքականությունը, իսկ լրատվամիջոցներով /մասնավորապես՝ թերթերով/ արված մեկնաբանություններն ու վերլուծություններն օգնում են հստակ պատկերացում ունենալ հարցի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է կուսակցական թերթերին, ապա հաստատակամորեն կարելի է ասել, որ այս թերթերը են քննարկվելիք հարցի առնչությամբ նրբենէ չեն կատարել որոշակի կողմնակալություն՝ լոնլով կամ քողարկելով հակամարտության կարգավորման գործնաթագի իրական պատկերը:

Զնայած Արցախյան ԶԼՄ-ների միջնորդ եղած տարրերություններին, այնուամենայնիվ նրանք բոլորն էլ, ելնելով արցախահայ հասարակության կարծիքներից ու ակնկալիքներից, հարցի լուծումը բխեցնում են հետեւյալ պատմական իրականությունից՝ բանակցություններում ԼՂՀ-ի հետ պետք է հաշվի նստեն որպես պատերազմում հաղթանակած կողմի հետ: Ղարաբաղցիները, ելնելով պատմական փորձից, չեն կարող վստահել իրենց անվտանգությունը՝ միջազգային հանրության կողմից խստացվող նրաշխիքներին: ԼՂՀ-ն հակամարտության ցանկացած հանգուցալուման դեպքում չի կարող գտնվել Ադրբեյջանի կազմում ուղղահայաց մնակայության ձևով, բայց պատրաստ է հորիզոնական կապեր հաստատել նրա հետ:

(1. էջ 15):

Գրականություն

1. Ալեքսանդր Գրիգորյան. «Ղարաբաղյան հիմնահարցը՝ հակամարտող եւ նրբորդ կողմների զանգվածային լրատվամիջոցներում», - լրագրողի մտորումներ (2,4,16 էջներ):
2. Ալեքսանդր Մանասյան. «Ղարաբաղյան հիմնախնդիր. փաստարկներ եւ փաստաթղթեր», - Երևան, 2005թ. (7, 10,11 էջներ):
3. «Նորավանք» հիմնադրամի էլեկտրոնային տարբերակ:

Карабахский вопрос в СМИ. Военный и послевоенный период.

А.А.Аванесян

Резюме

Проблема “Карабахский конфликт” возникла с нарушения безопасности армянской государственности. В связи с тем, что Нагорный Карабах является южно-кавказским регионом, мирное и справедливое решение Нагорно-Карабахского конфликта является очень важным в первую очередь с точки зрения региональной безопасности. В этом деле, конечно, большое место занимает эфир объективной и справедливой информации, которая помогла бы международному сообществу правильно понять требование жителей региона, которое привратно интерпретировалось в советской период. Пожалуй, это и является той причинно-следственной связью, что проблема, которая могла бы быть решена еще в 20-ых гг. прошлого века, по сей день остается актуальной.

The Karabakh issue in media. War and postwar period.

A.A.Avanesyan

Summary

The Nagorno-Karabakh conflict has occurred from the beginning of violation of safety of Armenian statehood. As it is a South-Caucasian region, the peaceful and justice regulation of the Nagorno-Karabakh conflict is very important for the regional safety. In this case the objective and justice mass media information is very important for the international community could understand the demand of the people living in the region, which was represented incorrectly during the Soviet Union period. And, maybe this is the reason that the problem keeps staying up-to-date till now, which seemed to have solution in the 20s of last century.